«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2017 թվականի

«Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը»** հարցը (զեկուցող՝ ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մ.Է.Մովսիսյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ֆակուլտետում 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսումնական և գիտահետազոտական աշխատանքներն իրականացվել են համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներին ու հանձնարարականներին համապատասխան: Դեկանատը և ամբիոնները որոշակի գործունեություն են իրականացրել ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու ուղղությամբ:

ՀՊՏՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված գործողություններից 2016-2017 թթ. ֆակուլտետում իրականացվել են.

Կրթական գործընթացի բարեփոխումներ

Համաձայն ՀՊՏՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գերակայությունների՝ 2016-2017 ուսումնական տարվանից «Վիճակագրություն» մասնագիտության գծով բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակով սահմանված չափորոշիչներին համաձայն և միջազգային փորձի ուսումնասիրության վրա հիմնված, մասնագիտական կրթական նոր ծրագրով:

2016-2017 ուստարվա ընդունելությունը կազմակերպվել է կրթական նոր ծրագրով:

2016-2017 ուստարում «Վիճակագրություն» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգ ընդունվել է 17 ուսանող, որից 9-ը՝ վճարովի ուսուցման համակարգում, 8-ը՝ պետպատվերի համակարգում: Ավելի ուշ, ըստ գործող կարգի՝ բուհի միջոցների հաշվին 100% փոխհատուցմամբ անվճար ուսուցման համակարգ է տեղափոխվել վճարովի ուսուցման համակարգում հրամանագրված 2 ուսանող:

Ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով (մինչև առաջին լուծարքը) ֆակուլտետում առկա բակալավրիատի ուսման առաջադիմության միջին մակարդակը կազմել է 65.4%: «Վիճակագրություն» մասնագիտության գծով առաջադիմության մակարդակը 4.6 տոկոսային կետով գերազանցել է ֆակուլտետի միջին մակարդակին և կազմել է 70.0%, «Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ» մասնագիտության առաջադիմությունը կազմել է 64.0%, ինչը 1.4 տոկոսով պակաս է

միջին մակարդակից, իսկ «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մասնագիտության գծով առաջադիմության մակարդակը -2.8 տոկոսային կետով զիջել է միջին մակարդակին և կազմել է 62.6%: Առկա բակալավրիատում ուսման առաջադիմության պատկերն ըստ կուրսերի հետևյալն է. I կուրս՝ 64.7% (միջին մակարդակին զիջել է 1.2 տոկոսային կետով), II կուրս՝ 63.6% (միջին մակարդակին զիջել է 1.8 տոկոսային կետով), III կուրս՝ 66.7% (միջին մակարդակին գերազանցել է 1.3 տոկոսային կետով), IV կուրս՝ 70.3% (միջին մակարդակին գերազանցել է 4.9 տոկոսային կետով):

Ուսման առաջադիմության մակարդակն անհամեմատ ցածր է հեռակա ուսուցման բակալավրիատում: 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով առաջադիմության միջին մակարդակը մինչև 1-ին վերահանձնումը կազմել է 57.1%, 1-ին վերահանձնումից հետո ավելացել է 14.3 տոկոսային կետով և կազմել 71.4%:

Դիտարկվող ժամանակաշրջանում առկա ուսուցման մագիստրատուրայում ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով միջին առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է 96.7%: Ըստ կուրսերի պատկերը հետևյալն է. I կուրս՝ 93.3% (միջին մակարդակին զիջել է 3.4 տոկոսային կետով), II կուրս՝ 100% (միջին մակարդակին գերազանցել է 3.3 տոկոսային կետով):

Մարդկային ռեսուրսներով ապահովվածություն

Ֆակուլտետի 3 ամբիոններում աշխատում են 56 դասախոսներ (5-ը՝ արտաքին համատեղությամբ), որից 23-ը՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնում, 16-ը՝ վիճակագրության, իսկ 17-ը՝ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնում:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 70%-ն ունեն գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան:

Դիտարկվող ժամանակաշրջանում ֆակուլտետի ամբիոններն ունեն 8 ասպիրանտ: 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի 1 ասպիրանտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Գործունեության միջազգայնացում

Ֆակուլտետի միջազգայնացման գործընթացն իրականացվում է բուհի միջազգայնացման գործընթացի տրամաբանությամբ և դրա շրջանակներում: Մասնավորապես՝ 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակից ֆակուլտետի 1 ուսանող «Էրասմուս+» ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում երկրորդ կիսամյակի ուսումնառությունը շարունակում է Բուլղարիայի Հանրապետությունում:

Նույն «Էրասմուս+» դասախոսների փոխանակման ծրագրի շրջանակներում ֆակուլտետի 3 դասախոսներ դասախոսություններով հանդես են եկել եվրոպական տարբեր բուհերում:

2016-2017 ուստարվա ընթացքում ֆակուլտետի դասախոսների կողմից միջազգային գրախոսվող ամսագրերում հրատարակվել է 5 գիտական հոդված:

Ռեսուրսային ապահովվածություն

Ֆակուլտետի լսարանային ֆոնդն ամբողջությամբ բավարարում է ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Ֆակուլտետում առկա է համակարգչային տեխնիկայով ու պրոյեկտորով կահավորված 2 լսարան և 2 լաբարատոր սրահ:

Կառավարման համակարգի բարելավում ու գործընթացների կանոնակարգում

Այս գերակայության շրջանակներում 2016-2017 ուստարում մշակվել ու հաստատվել է ֆակուլտետի կանոնադրությունը:

Այդուհանդերձ, ժամանակակից աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական, ժողովրդագրական վերափոխումները նորանոր մարտահրավերներ են ներկայացնում ողջ կրթական համակարգին, և դրանց դիմակայելու ու համարժեք արձագանքելու համար անհրաժեշտ է գնահատել կրթական ողջ համակարգում առկա թերություններն ու բացթողումները և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել դրանց հաղթահարման ուղղությամբ: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ ելնելով մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից՝ ֆակուլտետում առկա են որոշ թերություններ և բացթողումներ:

Արձանագրված խնդիրներ

1. Հայալեզու մասնագիտական կիրառական նշանակության գրականության բացակայություն:
2. Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրապարակվող գիտական հոդվածների թվաքանակի ցածր մակարդակ:
3. Պրոֆեսորադասախոսական կազմի տարիքային կազմի անհամաչափություն:
4. Դասավանդման ժամանակակից ձևերի և եղանակների ներդրման անհրաժեշտություն:
5. Ուսումնական և արտադրական փորձառությունների կազմակերպման և անցկացման հետ կապված խնդիրներ:
6. Դիմորդների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների դերի և նշանակության բարձրացման ուղղությամբ տարվող անբավարար աշխատանքներ:
7. Առաջադիմության մակարդակի մեծ տատանումները ինչպես ըստ կուրսերի, այնպես էլ ըստ մասնագիտությունների:
8. Մագիստրոսական կրթական ծրագրերի նկատմամբ պահանջարկի ցածր մակարդակ:
9. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսությունների բովանդակության և կառուցվածքի հետ կապված խնդիրներ:
10. Գիտահետազոտական աշխատանքներում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության ցածր մակարդակ:
11. Ֆակուլտետի գործունեության միջազգայնացմանն ուղղված հիմնախնդիրներ, մասնավորապես՝
    1) ցածր է ակադեմիական փոխանակումների և միջազգային այլ ծրագրերում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության մակարդակը: Ակադեմիական փոխանակման գործընթացի

լիարժեք իրականացման համար դեռևս լուրջ խնդիր է մնում օտար լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը.

2) ֆակուլտետի դասախոսների և վարչական աշխատողների՝ օտար լեզուների պատրաստվածության անբավարար մակարդակը դառնում է ոչ միայն միջազգային շփումների զարգացումը խոչընդոտող գործոն, այլև նվազեցնում է ֆակուլտետի գրավչությունն արտասահմանցի ուսանողների համար:

12. Լաբորատոր հենքի ֆիզիկական և բարոյական մաշվածություն:
13. ՈՒԳԸ աշխատանքների կազմակերպման և անցկացման, ուսանողների ու մագիստրանտների ներգրավվածության ցածր մակարդակ:

Ելնելով վերոնշյալից՝գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. **Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ֆակուլտետի դեկանատին՝**
   1) համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումները քննարկել ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերում, առկա թերությունների վերաբերյալ մշակել համապատասխան միջոցառումներ՝ դրանք շտկելու ուղղությամբ.
   2) ուշադրության կենտրոնում պահել ֆակուլտետում վարվող կադրային քաղաքականությունը, ամբիոնների կողմից դասախոսների ընտրության և համալրման գործընթացը՝ նախապատվություն տալով բանիմաց, ակտիվ գիտահետազոտական գործունեություն իրականացնող, մանկավարժական և մասնագիտական անհրաժշտ ունակություններ ունեցող կադրերին.
   3) հսկողություն իրականացնել դասալսումների գործընթացի նկատմամբ, ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել դրանց արդյունքները.
   4) ամբիոններում աշխատանքներ իրականացնել մագիստրոսական խմբերում դասավանդման մակարդակն ու մատուցվող նյութի որակը բարձրացնելու և բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու ուղղությամբ.
   5) հսկողության տակ պահել դասամատյաններում ուսանողների հաճախումների և ակտիվության հաշվառման ու գնահատման գործընթացը.
   6) ամբիոնների հետ միասին բարելավել խնամարկուների աշխատանքը ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգերում.
   7) խրախուսել ուսումնամեթոդական ձեռնարկների, խնդրագրքերի, դասախոսությունների նյութերի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները.

8) ակտիվացնել ֆակուլտետի ուսանողների և դասախոսների մասնակցությունը ակադեմիական շարժունության ծրագրերին:
9) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) ֆակուլտետային խորհրդի գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և մագիստրանտներին.
10) հետևել աշխատանքային կարգապահությանը՝ խախտումների ցանկացած դեպք դարձնելով առանձին քննարկման առարկա.
11) առավել արդյունավետ դարձնել դեկանատի աշխատողների կողմից ուսանողներին մատուցվող ծառայությունները:

3. Ինֆորմատիկային և վիճակագրության ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչներին՝

1) պարբերաբար վերանայել և արդիականացնել բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը՝ ուղղված գործատուների պահանջների և կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդմանը.
2) մշակել և թարմացնել դասավանդվող բոլոր դասընթացների առարկայական ծրագրերը՝ միասնական մեթոդաբանությամբ և կառուցվածքով.
3) խրախուսել հայալեզու գրքերի, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի, խնդիրների և թեստերի ժողովածուների հրատարակումը.
4) բարձրացնել յուրաքանչյուր դասախոսի պատասխանատվությունը դասավանդման որակի բարելավման, ուսանողների ակտիվության գնահատման և անհատական աշխատանքների ղեկավարման գործում.
5) հատուկ ուշադրություն դարձնել ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի սերնդափոխության գործընթացին, ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով համապատասխան կադրերի պատրաստման խնդրին՝ կարևորելով նրանց ոչ միայն գիտահետազոտական, այլև մանկավարժական ունակությունները.
6) ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները, բարձրացնել գիտական հետազոտությունների մակարդակն ու որակը.
7) մշակել և կիրառել դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների վարման նոր, ժամանակակից և արդյունավետ մեթոդներ.
8) մշակել ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների նոր ծրագրեր, պատշաճ հսկողություն իրականացնել փորձառության ընթացքի նկատմամբ.
9) խրախուսել «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում դասախոսների փոխանակման ու գործընկեր համալսարաններում դասավանդման ծրագրերին ամբիոնների դասախոսների ակտիվ մասնակցությունը.
10) ապահովել կրթական և առարկայական ծրագրերի՝ առաջավոր արտասահմանյան համալսարանների ծրագրերի հետ համապատասխանությունը.

11) ապահովել ակադեմիական փոխանակության ծրագրերով արտասահմանյան համալսարաններում դասավանդած կամ հետազոտություններ իրականացրած մասնագետների փորձի տարածումը ամբիոնի աշխատողների շրջանում.
12) անմիջական հսկողություն իրականացնել համապատասխան ակադեմիական խմբերում ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ, պարբերաբար լսել և քննարկել խնամարկուների հաղորդումները:

4. **Սույն որոշումը քննարկել ամբիոնների առաջիկա նիստերում ու ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականների կատարման համար:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

07.06.2017 թ.